# Բակալավրի աստիճան շնորհող ծրագրերի ընդունելության կանոնակարգ

Թարմացվել է 2025 թվականի մարտին
*Կանոնակարգ ADMS20140001*

Այս կանոնակարգը կարգավորում է Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ) բակալավրի աստիճան շնորհող ծրագրերի դիմորդների ընդունելությունը:

Համագործակցելով ակադեմիական ծրագրերի հետ, Ընդունելության գրասենյակը նպատակ է հետապնդում հասնել համալսարանի`ուսանողների հաշվառման վերջնանպատակներին: Տրամադրելով բարձրորակ ծառայություններ` այն միտված է գրավել, ընդունել և հաշվառել տարբեր ուսանողների, ովքեր պատրաստ են գրանցել ակադեմիական հաջողություններ, դառնալ համալսարանական համայնքի ակտիվ անդամներ և որոնք ձգտում են իրականացնել Հայաստանի ամերիկյան համալսարանի նպատակները և առաքելությունը:

ՀԱՀ-ն հանձն է առնում առանց խտրականության տրամադրել բարձրորակ բակալավրի աստիճան շնորհող կրթություն բարձր որակավորումներ ունեցող դիմորդներին`անկախ իրենց վճարունակությունից: Այնուամենայնիվ, յուրաքանչյուր ծրագրի տեղերը սահմանափակ են, այդ իսկ պատճառով ընդունելությունն իրականացվում է մրցութային կարգով: Ընդունելության գործընթացի նպատակն է ընտրել ուսանողներ, որոնք ունեն անհրաժեշտ հմտություններ և կարողություններ ՀԱՀ-ում հաջողելու համար և որոնց կրթական և կարիերայի նպատակները համապատասխանում են ՀԱՀ-ին: Ավագ դպրոցի որոշակի միջին որակական գնահատականը (ՄՈԳ) կամ ընդունելության քննության գնահատականը ընդունելություն չեն ապահովում:

Հայաստանի ամերիկյան համալսարանը բաց է ակադեմիական որակավորումներ ունեցող բոլոր դիմորդների համար`առանց խտրականության: Տե՛ս «Առանց խտրականության» քաղաքականություն

**1. Բակալավրի աստիճան շնորհող ծրագրերի ընդունելության դիմում-հայտ**

ՀԱՀ-ն իրականացնում է համապարփակ ընդունելություն: Յուրաքանչյուր դիմում-հայտ անցնում է նախնական տեխնիկական դիտարկում: ՀԱՀ ընդունվելու համար դիմորդները պետք է ներկայացնեն ամբողջական դիմում-հայտ` բոլոր անհրաժեշտ հավելումներով, ավագ դպրոցի ավարտական վկայական կամ համապատասխան փաստաթուղթ` ոչ ուշ քան ամռանը, բակալավրի դասերի մեկնարկից առաջ: ՀԱՀ-ի բակալավրի աստիճան շնորհող ծրագրերի ընդունելության հանձնաժողովը (UAC) այնուհետ մանրամասնորեն ուսումնասիրում է յուրաքանչյուր համապատասխանող դիմորդի դիմում-հայտը: Անհրաժեշտության դեպքում որոշ դիմորդներ կարող են հրավիրվել հարցազրույցի`որպես ընդունելության գործընթացի մի մաս: Քանի որ ՀԱՀ-ում ընդունելությունը մրցակցային է, UAC -ն հաշվի է առնում և՛ուսումնական և՛անձնական տեղեկատվությունը`ներառյալ, բայց ոչ միայն, կրթական հիմքը, դպրոցական ծրագիրը, ընդունելության քննության պաշտոնական արդյունքները, արտադասարանային կամ կամավորական գործունեությունը, շարադրությունները և անհրաժեշտության դեպքում հարցազրույցը:
Ընդունելության վերաբերյալ որոշումները վերջնական են:

**1.1. Ընդունելության ընդհանուր պահանջներ**

ՀԱՀ-ի բակալավրի աստիճան շնորհող ծրագրերի ընդունելության համար դիմորդները պետք է համապատասխանեն ընդունելության հետևյալ պահանջներին`

1. Բակալավրի աստիճան շնորհող ծրագրերի ընդունելության ամբողջական դիմում-հայտ և բոլոր անհրաժեշտ փաստաթղթեր`ինչպես նշված է դիմում-հայտի ցուցումներում: Դիմում հայտերը հասանելի են հետևյալ հղումով [admissions.aua.am/apply](admissions.aua.am/apply)

2. Ավագ դպրոցի գնահատականների վերաբերյալ պաշտոնական տեղեկագիր: Դիմում-հայտը ներկայացնելիս դիմորդը պետք է լինի ավագ դպրոցի կամ համապատասխան այլ հաստատության ուսումնառության վերջին տարում կամ պետք է արդեն ավարտած լինի ավագ դպրոցը կամ համապատասխան այլ հաստատությունը (ավելին իմանալու համար այցելեք admissions.aua.am/application-requirements/):
3. Ավագ դպրոցի ավարտական վկայական՝ոչ ավելի ուշ քան ամռանը՝ՀԱՀ-ում բակալավրի դասընթացների մեկնարկից առաջ: Համարժեք ավարտական վկայականների վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը հասանելի է Ավագ դպրոցի ավարտական վկայական բաժնում այս հղումով:
4. Բավարարել անգլերենի և մաթեմատիկայի իմացության պահանջները (1.2 բաժնում՝ստորև )
5. Պետության կողմից տրված նույնականացման փաստաթղթի նկարի սկանավորված տարբերակ (օրինակ՝անձնագիր, նույնականացման քարտ)
6. Հանրային ծառայությունների համարանիշի սկանավորված տարբերակ (միայն Հայաստանի քաղաքացիների համար)
7. Դիմորդի՝վերջերս արված լուսանկար, որը համապատասխանում է առցանց դիմում-հայտի ցուցումներում նշված պահանջներին:
8. Դիմում-հայտի ներկայացման չվերադարձվող գումար

**1.2. Ընդունելության քննության/Ստանդարտացված թեստի պահանջներ**

*Ա. Անգլերեն լեզվի իմացություն*

ՀԱՀ-ում դասավանդման լեզուն անգլերենն է: Այդ իսկ պատճառով բոլոր դիմորդները պետք է ցուցաբերեն անգլերեն լեզվի գերազանց իմացություն՝ՀԱՀ-ում դասընթացներին հաջողությամբ մասնակցելու համար:

Այն դիմորդները, որոնց առաջին լեզուն անգլերենը չէ, պետք է ցուցաբերեն անգլերեն լեզվի գերազանց իմացություն կամ TOEFL iBT-ի կամ IELTS Academic-ի միջոցով: Լեզվակիրները կամ լեզվակրին համարժեք անգլերենի իմացություն ունեցող անձինք կարող են ազատվել անգլերեն լեզվի իմացության քննությունից, եթե համապատասխանում են Անգլերեն լեզվի իմացության թեստից ազատման մասին կանոնակարգում նշված պահանջներին:

Դիմորդները պետք է նկատի առնեն, որ UAC -ն հաշվի է առնելու ինչպես ներկայացված պաշտոնական ընդհանուր միավորները, այնպես էլ քննության յուրաքանչյուր բաժնից ստացած միավորները. Դիմորդները, որոնց միավորները 67 ու ավելի ցածր է TOEFL iBT-ից կամ 5.5 ու ավելի ցածր IELTS Academic-ից, ավտոմատ կերպով կմերժվեն:

ՀԱՀ ընդունելության համար TOEFL iBT/IELTS Academic քննությունների արդյունքները վավեր են ընդամենը երկու տարի: Էլեկտրոնային համակարգով դիմորդները պետք է ուղարկեն թեստի միավորները ՀԱՀ՝ընտրելով հաստատության կոդը՝
TOEFL iBT - 4151
IELTS Academic - Բաղրամյան պ. 40, Երևան
Դիմում-հայտերը չեն համարվում ամբողջական, մինչև ընդունելության գրասենյակը չի ստանում անգլերենի լեզվի իմացության պաշտոնական միավորները

*Բ. Մաթեմատիկայի իմացություն*

Բակալավրի աստիճան շնորհող ծրագրերի ընդունելության կանոնակարգ

Դիմում-հայտ ներկայացնելիս դիմորդները պետք է ցուցաբերեն մաթեմատիկայի գերազանց իմացություն: Մաթեմատիկայի իմացության հասանելի քննությունները ներառում են SAT կամ ACT: Պահանջներին համապատասխանելու դեպքում որոշ դիմորդներ հնարավոր է ազատվեն մաթեմատիկայի իմացության քննությունից: Մանրամասների համար տես կետ 2բ-ն՝ Դիմում հայտի պահանջները-ՀԱՀ ընդունելություն բաժնում:
ՀԱՀ ընդունելության համար SAT/ACT-ի միավորները վավեր են ընդամենը երեք տարի: Դիմորդները պետք է համոզված լինեն, որ պաշտոնական թեստի միավորները ուղարկել են անմիջապես ՀԱՀ՝նշելով հաստատության կոդը՝
SAT – 7257
ACT – 6982
Դիմում-հայտերը չեն համարվում ամբողջական, մինչև ընդունելության գրասենյակը չի ստանում մաթեմատիկայի իմացության քննության պաշտոնական միավորները:

**1.3. Ավտոմատ մերժման միավորների շեմը**
Ավտոմատ մերժման միավորների շեմը սահմանվում է համալսարանի ծրագրերի կողմից և հաստատվում է Բակալավրի աստիճան շնորհող ծրագրերի ընդունելության հանձնաժողովի կողմից: Ըստ այդմ դիմորդի դիմում-հայտը մերժվում է, եթե նա հավաքել է շեմային միավորը կամ դրանից ցածր միավոր: Ավտոմատ մերժման շեմային միավորների մասին տեղեկատվությունը կարող եք գտնել այստեղ:

**1.4. Դիմում-հայտի ներկայացման վերջնաժամկետները**
Դիմորդներին խորհուրդ է տրվում դիմում-հայտերը ներկայացնել հնարավորինս շուտ և հրապարակված վերջնաժամկետներից առաջ:
Դիմում-հայտերի ներկայացման վերջնաժամկետները ներկայացված են առցանց՝ հետևյալ հղումով:
Վերջնաժամկետից հետո ներկայացված ցանկացած նոր տեղեկատվություն չի դիտարկվի:

**1.5. Դիմում-հայտի ներկայացման վճար**
Բակալավրի աստիճան շնորհող ծրագրերի ընդունելության համար դիմում-հայտ ներկայացնող դիմորդները և վերադիմողները պետք է դիմում-հայտի ներկայացման վճարում կատարեն: Դիմում-հայտի ներկայացման վճարը վերադարձի կամ փոփոխության ենթակա չէ: Մանրամասների համար անցեք հետևյալ հղումով admissions.aua.am/undergraduate/application-requirements:

**2. Դիմում-հայտի կարգավիճակ և ընդունելության մասին որոշումներ**
Որպեսզի UAC-ն դիմում-հայտի վերաբերյալ որոշում կայացնի, ընդունելության գրասենյակը պետք է ստանա ամբողջական դիմում-հայտեր՝բոլոր անհրաժեշտ փաստաթղթերով: Այն դիմորդները, որոնք ամբողջական դիմում-հայտի փաթեթները կներկայացնեն ՀԱՀ-ի ընդունելության վերջնաժամկետներում, էլեկտրոնային նամակով կստանան իրենց ընդունելության կարգավիճակի մասին ծանուցում՝ընդունելության վերջնաժամկետից 10 շաբաթ անց: Այն դիմորդները, ովքեր UAC -ի կողմից դիտարկվելու համար հրապարակված վերջնաժամկետից հետո կներկայացնեն նոր տեղեկատվություն, ներառյալ թեստի վերահանձման միավորները, կտեղափոխվեն մյուս վերջնաժամկետների մեջ, եթե այն առկա լինի:

Ընդունելության վերաբերյալ որոշումները վերջնական են:

Բակալավրի աստիճան շնորհող ծրագրերի ընդունելության կանոնակարգ

Բակալավրի աստիճան շնորհող ծրագրերի դիմում-հայտերի կարգավիճակները դասակարգվում են հետևյալ կերպ՝

*Ընդունելություն.* Ընդունելության կարգավիճակի մասին նամակի միջոցով դիմորդը ծանուցվում է, որ ընդունվել է:

*Մերժում.* Դիմորդի դիմում-հայտը մերժվում է:

*Տարժամկետում.* Դիմորդի դիմում-հայտը տարժամկետվում է և տեղափոխվում է ընդունելության մյուս վերջնաժամկետներ՝հետագա դիտարկման համար: Այս վերջնաժամկետից առաջ դիմորդը կարող է ներկայացնել նոր տեղեկատվություն, որը կարող է մեծացնել իր՝ բակալավրի աստիճան շնորհող ծրագրերիի ընդունելության հնարավորությունները: Դիմորդը, որի դիմում-հայտը տարժամկետվում է, մյուս վերջնաժամկետի ծանուցման ժամանակահատվածում կստանա ընդունելության կարգավիճակի վերաբերյալ նոր նամակ:

*Որակազրկում.* Դիմորդի դիմում-հայտը կարող է մերժվել կամ նա կարող է որակազրկվել գրագողության, կեղծ/ապակողմնորոշող տեղեկատվության  կամ ցանկացած այլ անընդունելի դրսևորման պատճառով՝ինչպես սահմանված է բակալավրի աստիճան շնորհող ծրագրերի ընդունելության կանոնակարգի մեջ: UAC-ն իրեն իրավունք է վերապահում մերժել դիմորդի դիմում-հայտը իր հայեցողությամբ , եթե դիմորդը չի ցուցաբերում օրինակելի վարքագիծ մինչ հաշվառումը:

**3. Բողոքարկման ընթացակարգ**

Դիմորդները կարող են բողոքարկել և հարցում կատարել դիմումի որոշման վերանայման վերաբերյալ: Բողոքարկումները ներկայացվում են ընդունելության որոշումներից հետո հաջորդ աշխատանքային օրը հետևյալ ձևով, որը հասանելի է միայն նշված ժամանակահատվածում, յուրաքանչյուր ընդունելության ժամկետի որոշումների ավարտից հետո: Դիմելու կարգը հասանելի է ընդունելության կայքում: Ավելին իմանալու համար այցելեք admissions.aua.am:

Բոլոր ներկայացված տեղեկությունները կդիտարկվեն Համալսարանի ընդունելության բողոքարկման հանձնաժողովի կողմից (ՀԲՀ) և ուսանողի բակալավրիատի դիմումի մի մասը կկազմեն: Հանձնաժողովի որոշման մասին դիմորդներին գրավոր կերպով կծանուցվի հինգ աշխատանքային օրվա ընթացքում՝ ներկայացման ամսաթվից հետո: ՀԲՀ-ն կարող է.

1. Բողոքարկումը համարել անհիմն
2. Բողոքարկումը քննարկել և հաստատել
3. Բողոքարկումը քննարկել և մերժել

**4. Վերադիմում**

Դիմորդներին, որոնց դիմում-հայտը նախկինում մերժվել է, տեխնիկապես անհամապատասխան կամ թերի է եղել, թույլատրվում է վերադիմել նույն կրթական ծրագրին՝ ընդունելության նույն շրջանում, եթե միայն նրանք ունեն նոր (ավելի բարձր) միավորներ անգլերենի և մաթեմատիկայի իմացության քննություններից. Առանց այս թարմացումների, դիմորդը պետք է սպասի մեկ տարի մինչ հաջորդ տարվա ընդունելություն:

Ընդունելության նույն շրջանում դիմորդն ունի այլ կրթական ծրագրին նույն տվյալներով դիմելու իրավունք:

Ընդունված ուսանողերը, որոնք չեն հաշվառվել ՀԱՀ-ում կամ տարկետում չեն վերցրել, պետք է վերադիմեն նոր ակադեմիական տարվա համար: Վերադիմումները կվերանայվեն UAC-ի կողմից և պետք է ներկայացվեն հրապարակված վերջնաժամկետներում:

Նոր թեստի միավորներով վերադիմողները, որոնք դիմում են նույն ուսումնական տարվա ընդունելության շրջանում, կարիք չունենն վերաներկայացնել ակադեմիական տեղեկագիր/գրեր,

դիմպլոմ/ներ, վկայական/ներ կամ այլ կից փաստաթղթեր, որոնք արդեն ներկայացրել են բակալավրի աստիճան շնորհող ծրագրերի ընդունելույթան նախնական դիմում-հայտի հետ:

**5. Տվյալների վավերացում**
ՀԱՀ-ի Ընդունելության գրասենյակը իրեն իրավունք է վերապահում ստուգել դիմում-հայտերի մեջ ներկայացված տեղեկատվությունը և ընդունելության ընթացքում ներկայացված այլ փաստաթղթերը: Դիմում-հայտում միտումնավոր կեղծ կամ ապակողմնորոշող տեղեկատվություն ներկայացնելը կհանգեցնի հայտի մերժմանը:

**6. Ինչպես արձագանքել ընդունելության վերաբերյալ նամակին**
Ընդունելության առաջարկի հետ մեկտեղ դիմորդները ստանում են հղում դեպի «Հաշվառման մտադրության» ձևաթուղթ: Ընդունված ուսանողները պետք է լրացնեն «Հաշվառման մտադրության» ձևաթուղթը և ներկայացնեն ուսման վարձի չվերադարձվող կանխավճարը՝ մինչև «Հաշվառման մտադրության» ձևաթղթի մեջ նշված վերջնաժամկետը՝իրենց տեղը նշված ծրագրում ապահովելու համար: Ընդունված ուսանողները, որոնք չեն ներկայացնում ամբողջական «Հաշվառման մտադրության»  ձևաթուղթը կամ ուսման վարձի կանխավճարը ժամանակին, կարող են կորցնել իրենց տեղը ծրագրում:

**7. Դիմումի ժամանակ ներկայացված նյութերի վերադարձ**
Բակալավրի աստիճան շնորհող ծրագրերի ընդունելության համար ներկայացված դիմում-հայտը և բոլոր լրացուցիչ փաստաթղթերը դառնում են Հայաստանի ամերիկյան համալսարանի սեփականությունը և չեն վերադարձվում դիմորդին:

**8. Դիմորդին հատուկ հարցումներ ներկայացնելը**
Դիմորդի կարգավիճակին վերաբերող բոլոր հարցերը պետք է ուղղակիորեն ներկայացվեն ընդունելության գրասենյակ՝դիմորդի կողմից:

**Հավելյալ փաստաթղթեր կցված կանոնակարգին**

- Տեղեկատվություն ուսման վարձի վերաբերյալ
- Այլ բուհերից տեղափոխվելու մասին տեղեկատվություն
- Բակալավրի աստիճան շնորհող ծրագրերի ընդունելություն
- Փորձաշրջան և բուհից հեռացում
- Աստիճան չշնորհող կարգավիճակ
- Աստիճան չշնորհող կարգավիճակ
- Վկայագիր (հետբակալավրական)
- Ֆինանսական աջակցություն
- Կրեդիտների փոխանցում
- Ծրագրի կամ մասնագիտական առարկայի փոփոխություն